



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~41~~

Գ. ՍԵՒՐՍ. ԿՅԱՆ


ԲԱՅԼՆԵՎԻԿՅԱՆ
Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ
Գ Ա Ր Ն Ա Ն Ա Յ Ա Ն Ը
Ե Ե Վ,
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը



329.154 (47.925)

Կ. ՍԵՂՐԱԿՅԱՆ

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ
Յ Ե Վ
ԿՈՄՅԵՐԻՏՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1981

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ ՅԵՎ
ԿՈՄՅԵՐԻՏ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սոաջիկա գարնանացանի կամպանիայի աշխատանքների հաջող կազմակերպումը, նրա պլանների կատարումը և գերակատարումը ունի վճռական նշանակություն գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի համար:

Գարնան գյուղատնտեսական կամպանիան ունի նաև խոշոր նշանակություն ՆՍՀՄ-ի ինդուստրիացման տեմպը ավելի քան ութեղացնելու, գյուղատնտեսական սոցիալիստական հատվածի ընդարձակման և ամրացման համար, վորը ապահովելու չե հաղթական շրջադարձի հետագա նվաճումները: «Կոլեկտիվացման շրջանում պլանի կատարումը գյուղում սոցիալիստական սարքերի, վճռական գերակշռում կտա կապիտալիստական տարրերի վերաբերմամբ, կամրապնդի բանվոր դասակարգի և գյուղացիության աշխատավոր մասսաների գոգումը, կավարտի ՆՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը— դա համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթություն կլինի» (Համ. Կոմ. Կուսի. Կենտկոմի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան միացյալ պլենումի բանաձևից) և վորի հիման վրա բանվոր դասակարգը Կոմպոնիստական կուսակցության ղեկավարությամբ ընթացիկ տարում լուծելու յե ընկ. Լենինի «Ո՞վ ում» լոզունգը նաև գյուղատնտեսության ասպարիզում, հորուտ սոցիալիստական հատվածի: Այդ խոշոր նվաճումները, մենք ձեռք ենք բերե-



1-296899

Հրատ. № 1550

Գրառեզ. № 6257 (բ) Դատվեր № 1344 տիրաժ 3.000

Պետհրատի տպարան Յերևանում

լու հիմնված սոցիալիստական շինարարության ծավալված վիթխարի հաջողությունների և մանավանդ կուտրնտեսությունների ու խորտնտեսությունների հաջող շինարարության վրա:

Անցած տարում մենք ունեցանք խոշորագույն նվաճումներ սովետոզների և կոլխոզների կազմակերպման ասպարիզում: 5-ամյակի առաջադրանքները կուլեկտիվացման բնագավառում միանգամայն գերազանցվեցին:

Վողջ Միության մասշտաբով կուլեկտիվներում ընդգրկված և 6,15 միլիոն չքավոր և միջակ անհատական տնտեսություններ, այսինքն գյուղացիական տնտեսություններից 24,1% -ը, իսկ հացահատիկային հիմնական շրջաններում — կոլտնտեսություններում ընդգրկված են գյուղացիական տնտեսությունների 49,3% -ը:

Կոլտնտեսությունների կողմից 1930 թ. գարնանացանի ու աշնանացանի ցանքստարածությունը կազմում և 43,4 միլիոն հեկտար, 5-ամյակի վերջին տարվա համար նախատեսված 20,6 միլիոնի հանդեպ: Դա նշանակում է, վոր 5-ամյակի առաջին 2 տարում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարիզում կարողացել ենք կատարել 2 անգամ գերազանցված ամբողջ 5-ամյակի ծրագիրը: Այս նվաճումները մեզ հիմք են ծառայում առաջիկա գարնան գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում ձեռք բերելու նորանոր հաղթանակներ գյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում:

Սակայն առաջիկա գարնանացանի կամպանիան չի կարող իր սպասած արդյունքները ունենալ, առանց հաշվի առնելու անցած գարնան գյուղատնտեսական

կամպանիայի փորձը, առանց ուսումնասիրելու մեր սխալները ու թերությունները կոլխոզարժման ասպարիզում:

Վերոնք եր մեր սխալները:

Վիթխարի նվաճումների կողքին մենք ունեցանք կոպիտ սխալներ, կուս գծի աղավաղումներ, «ձախ» քյալլագյողություններ, տեղական ստանձին կուսակցական կազմակերպությունների կողմից կոլխոզարժման ասպարիզում:

Միայնների հիմնական արմատը կայանում է «միջակի նկատմամբ ձիշտ մոտեցում չունենալը, միջակի նկատմամբ տնտեսական հարաբերություններ պահպանելու ասպարիզում, բռնություն թուզլ սալը» (Ն. Սալիկ):

Ամեն մի կոմյերիտականից պահանջվում է ել ավելի մանրագնին կերպով ուսումնասիրելու անցած գարնանացանի դասերը, և առանց սխալների ու կուս գծի աղավաղումների կրկնությունների, ձեռնարկելու, գարնանացանի մարտական խնդիրների կիրառումը, կազմակերպելու կոլխոզարժման նոր վերելքը:

Բացելիկյան յերկրորդ գարնանացանի և կոլխոզարժման նոր վերելքի վիթխարի խնդիրները հնարավոր չէ առաջ տանել ինքնահոս կերպով, տարեբաշտրեն, առանց պլանային դեկավրության, ինչպես այդ կարծում են այլ ուղորտյունիստները:

Կոմյերիտական բջիջների հիմնական խնդիրն է վճռականապես պայքարել ու մերկացնել այլ ուղորտյունի դմի ինքնահոսի թերության, կազմակերպել մասաներին ընդդեմ ուղորտյունի դմի, ընդդեմ տարելայնության, շարունակելով անհաշտ պայքար լերկու ֆրոնտում, մո-

բիւրեցացիացի յենթարկելով կոմիտերիտական շարքերը կուսակցութեան հիմնական գծի շուրջ ընդդեմ ոպորտունիտական թևորիայի և պրակտիկայի:

Այլ ոպորտունիզմը սոցիալիստական ծավալուն արշավի շրջանում, կապիտալիստական ելեմենտների դեմ վճռական պայքար կազմակերպելու շրջանում, չեղել և ու մնում և վորպես հիմնական վտանգ:

Առանց գործնական ու անողոք պայքար մղելու կուլակային, ապհնտորայի աջ ոպորտունիզմի, աջ «ձախ» բլոկի և նրանց նկատմամբ հաշտվողական վերաբերմունք ցույց տվողները դեմ հնարավոր չե հաջողութեամբ լուծել առաջիկա դարնանացանի առաջ ծառայած մարտական խնդիրները:

Ինչ խոսք, վոր անցյալ գարնան կոլխոզարժման ասպարիզում միջակ գյուղացիութեան նկատմամբ թույլ տված «ձախ», ըստ ելուցիան տրոցկիստական խոտորումները յերբեք չպետք և կրկնվեն այս տարի: Այդպիսի տեղեկացներ, փորձեր, «ձախ» քայլազոգութեանները պիտի ստանան շեշտակի հարվածը: Բանվոր դասակարգը հենված կոլխոզնիկ ու չքավոր գյուղացիութեան վրա, դաշնակց. ծ միջակ գյուղացիութեան հետ, սոցիալիզմ և կառուցում, առանց այս դաշինքի ել ավելի ամրացման մենք կապիտալիստական ելեմենտների վրա առաջ արշավել չենք կարող «Մենք մենտների վրա առաջ գյուղի կապիտալիստական տարրերի վրա, դաշնակցած միջակ գյուղացիութեան հետ, վորովհետև միմիայն այդպիսի արշավ կարող և մեզ հողթանակ բերել» (Ստալին պատասխան կոլտնտեսականներին):

Ամեն մի փորձ թերագնահատելու միջակ գյուղա-

ցիութեանը, հակադրելու նրան բանվոր դասակարգին ու չքավորութեանը կամ նրան դասելու կուլակութեան շարքին, պիտի ստանա իրեն վճռական հարվածը, պետք և ջախջախել ու մերկացնել մինչև վերջ հակահեղափոխական տրոցկիստական այդպիսի փորձերը:

Կիրառելով կուսակցութեան ճիշտ գիծ, դասակարգային թշնամուն՝ կուլակի դեմ, անողոք ու վճռական պայքար մղելով մենք ամբողջ ուժով պետք և նախապատրաստենք համատարած կոլեկտիվացումը, և այդ հիման վրա կուլակութեանը, վորպես դասակարգի վերացումը մեզ մոտ՝ Հայաստանում:

Ծավալուն արշավ դասակարգային թշնամու դեմ պահանջում և մեզանից լինել, ավելի կազմակերպված, կիրառել մասսաների հետ կապվելու նորանոր ձևեր և մեթոդներ, կուսակցութեան ղեկավարութեամբ գորահավաքի յենթարկել կոմիտերիտական մասսաներին, բանվոր ու աշխատավոր յերիտասարդութեան լայն խավերը, բայրեկիկյան յերկրորդ վճռական գարնանացանի պլանները կատարման ու գերակատարման համար:

Այս գարնան կամպանիայի ընթացքում հացահատիկային հիմնական շրջաններում Ուկրաինա (ստեպ), Հյուսիսային Կովկասի, Ստորին Վոլգիայի, Միջին Վոլգիայի (Զավոլոժեյի) գյուղացիութեան տնտեսութեանները 80% -ը ընդգրկվելու յե կոլեկտիվ տնտեսութեանները մեջ «դա նշանակում և, վոր այդ շրջաններում հիմնականում ավարտվում և համատարած կոլեկտիվացումը և կուլակութեանը վորպես դասակարգի վերացումը»:

Հացահատիկային մնացած շրջանների համար կենտրոնական սեահող շրջանը, Միբերը, Ուբալը, Ուկ-

բախնան, (Լիստոտիպ), Կազակստանի հայաստանիկային շրջանը կոլեկտիվացման են յենթարկվելու գյուղացիական տնտեսությունների 50% -ը: Այնուհետև գալիս է վերջին կատեգորիան, այսպես ասած սպառող շրջաններ, վորտեղ կոլեկտիվացման են յենթարկվելու գյուղացիական տնտեսությունների վոչ պակաս 20—25% -ը:

Տեխնիկական կուլտուրական բույսերի (բամբակազործական, ծխախոտագործական, այգեգործական, սոլաի մշակման և այլ) շրջաններում կոլեկտիվացման պիտք է յենթարկել գյուղացիական տնտեսությունների 50% -ը:

Միջին թվով ամբողջ ԽՍՀՄ-ում կոլեկտիվ տրնտեսություններում ընդգրկվելու չեն գյուղացիական տնտեսությունների կեսը:

Հայաստանում, 31 թ. գարնանացանի և աշնանացանի ընթացքում կոլեկտիվ տնտեսություններում պիտք է ընդգրկել գյուղացիական տնտեսությունների վոչ պակաս 20—25% -ը, իսկ կուլտուրական բույսերի մշակույթների (բամբակացան, ծխախոտագործական, այգեգործական) շրջաններում չքավոր ու միջակ անհատական գյուղացիների 50% -ը: Այժմ Հայաստանում գյուղացիական տնտեսությունների մոտ 16% -ը ընդգրկված է կոլեկտիվ տնտեսություններում, նոր հոսանքը ուժեղացել է գրեթե բոլոր շրջաններում: Չքավոր ու միջակ գյուղացիական հոծ մասսաները իրենց անհատական փորձով գործնական աշխատանքներում համոզվեցին, կոլտոզների առավելություն մեջ: Այժմ իրենք, գյուղացիական մասսաները տեսնում ու համոզվում են նրանում, թե ինչ խոշոր առավելություն-

ներ ունեն կոլտոզները անհատական տնտեսություններից, բերքատվության բարձրացման, աշխատանքների ուսցիոնալ կազմակերպման, բերքի բաշխման աշխատանքների ասպարիզում:

Կոմյերիտական կազմակերպությունների խնդիրն է կուսակցության ղեկավարությունում առաջիկա գարնան գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում կազմակերպել ու գլխավորել կոլտոզարժման նոր վերելքը, ղեկավարել չքավոր ու անհատ տնտեսությունների հոսանքը կոլտոզներում, բարձրացնել կոլտոզների հեղինակությունը, ամրացնել կոլտոզները տնտեսապես ու կազմակերպչորեն, կազմակերպել վճռական պայքար գարնանացանի պլանների կատարման ու գերակատարման համար, համախմբել գյուղի աշխատավոր մասսաներին գարնանացանի կոնկրետ հարցերի ցանքների տարածությունների լայնացման, բերքատվության բարձրացման, կուլտուրական (բամբակի, ծխախոտ, սոլա և այլն) մշակույթների, տարածությունների լայնացման համար:

Ինչ խոսք, վոր գարնանը գյուղատնտեսական կամպանիայի վճռական պայքարի շրջանում, կոլտոզարժման նոր վերելքի կազմակերպման ընթացքում անհամեմատ ել ավելի չեն սրվելու դասակարգային պայքարը, վորը ճնորձներ են ընդունում, սակայն այդ նոր ձևերով էլ նա կարող է սրվել և սրվել նորից ու նորից սրվելու չեն» (Կազանովիչ) վորովհետև կապիտալիզմը ճչի մեռնում անմիջապես, դեռ ավելին, վորքան նա մոտենում է իր մահվան, այնքան նա կատաղի չեն դառնում» (Լեֆին):

Այս իսկ պատճառով առաջիկա գարնանացանի

հիմնական խնդիրները հաջող կենսակործումը պահանջում է կուսակցութեան լավագույն ոգնական կոմյեթիտական կազմակերպութիւններէից համախմբել գլուղի չքավոր ու միջակ չերիտասարդութեանը իր շուրջը, ատուկ ուշադրութեան դարձնել չքավորական խմբակները աշխատանքներին, ել ավելի բարձրացնել նրանց դասակարգային զգոնութեանը, կազմակերպելով անողոք պայքար դասակարգային թշնամու դեմ: Կուլակը, տերտերը, առետրականը, և նրանց ինքնուրու հակական ֆաշիզմը՝ դաշնակցութեանը ամեն ոք ու ըոպե պայքարել է ու պայքարելու չե սոցիալիստական շինարարութեան, Խորհրդային իշխանութեան նորանոր նվաճումները դեմ:

Դասակարգային թշնամին իրեն պայքարի ընթացքում ոչտաղործում է բոլոր միջոցները, դիմում է ամեն տեսակի մեքենայութեանները քողարկված ու բացարձակ, գազտնի ու աշկարա խորհրդային իշխանութեանը տապալելու, կուլակների ու կապիտալիստները իշխանութեանը վերականգնելու համար:

Նրանք փորձեր կանեն չքավոր ու միջակ գյուղացիութեան յետամնաց խավերին իրենց ազդեցութեան տակ առնելու, հակադրելու կոլխոզին, ոգտագործելու տեղական կուս կազմակերպութիւնները առանձին սըխալները կոլխոզ շարժման, սերմ ֆոնդերի ստեղծման, կոլխոզների բերքի բաշխման ասպարեկներում, քայքայելու կոլխոզը, դեմ դուրս գալ ցանքսերի տարածութեանների լայնացման, ուժեղացնել իրենց հակահեղափոխական պայքարը մասնավորապէս բամբակացանի շրջաններում, բամբակի դեմ, նրա ցանքսատարածութեանների լայնացման դեմ:

Դասակարգային թշնամու վտանգութեաններին պետք է հակադրել աշխատավոր գյուղացիութեան լայն մասսաների կազմակերպված բռուցքը. պետք է ջախջախել տեղն ու տեղը ալքայիսի փորձերը, չքավոր ու միջակ լայն մասսաներին դասակարգային պայքարի ավելի ակտիվ ասպարեկ քաշել:

Կոլխոզը գյուղում դասակարգային պայքարի հանգուցային հարցն է. կոլխոզի շուրջը կազմակերպված դասակարգային պայքարի ընթացքում պետք է դաստիարակել կոմյեթիտական ու աշխատավոր յերիտասարդական մասսաներին: Ամեն մի կոմյեթիտական բջիջի և կոմյեթիտականի աշխատանքների լավագույն քննութեանը կլինի այն, թե նա վորքանով է կարողանում կուսակցութեան ղեկավարութեամբ կազմակերպել պայքարը կոլխոզի համար, կոլխոզաբժան նոր վերելքի համար, ընդգրկելու 100 տոկոսով կոմյեթիտականներին կոլխոզներում, կազմակերպելով չքավոր ու միջակ չերիտասարդութեանը կոլխոզի շուրջը: Առանց այս հիմնական պայմանի, առանց չքավոր ու միջակ լայն մասսաների գործնական մասնակցութեանը սոցիալիզմի կառուցման պայքարին, դժվար է կատարել վարնան գյուղատնտեսական կապանիայի վիթխարի պլանը, վորը պայքարի ծրագրի է հետագա նորանոր նվաճումներ ձեռք բերելու համար: Այս կապակցութեամբ մեր առաջ դրվում է գյուղական բոլոր կազմակերպութիւնների (կուս և ԼԿՅՄ բջիջների գյուլխորհուրդների, պրոֆկազմակերպութեանների) աշխատանքների անմիջական վերակառուցումը, դեպի վարնան գյուղատնտեսական կամպանիայի հարցերը:

Առանձնապէս պահանջվում է գյուղական կոմյեթիտականների լայնացման դեմ:

բիտական կազմակերպութիւններէց կատարել արմատական բեկում Միութեան աշխատանքներէ վերակառուցման տեմպերն ել ավելի արագացնելու գործում, տնտեսական շինարարութեան, կոլխոզ շարժման վողջ հարցերն դարձնելով կոմյերիտական բջիջներէ աշխատանքներէ առանցքը: Անհրաժեշտ է մատնանշել, վար Վոյստովը գյուղում դեռ ևս չափազանց թույլ կերպով է թափանցում կոլտնտեսութեան, տնտեսական ու կազմակերպչական աշխատանքներէ, եյութեան միջ, թույլ է մասնակցում կոլտնտեսութիւններէ ղեկավարութեան գործում, սլանները կազմելու աշխատանքի ճիշտ կազմակերպման, առաջ քաշման և կադրերէ պատրաստման, լեկամուտներէ բաշխման, տեխնիկայի բարձրացման, հողի մշակուելթներէ լավագուցն չեղանակներէ մրցման և այլ» ասպարեզներում (ընկ. Սալ-սանովի թեղիաներէց 9-րդ համագումարից):

Գյուղում մեր կոմյերիտական բջիջները հաճախ չեն կարողանում բավարար չափով պայքար մղել հանուն կոլխոզարժման բալլընիկյան տեմպերի, նրանք լետ են մնում, լերբեմն ել չեն կարողանում գլխավորել չքավոր ու միջակ գյուղացիութեան վողջ մասսաներէ շարժումը դեպի կոլխոզները, իսկ այս բոլորը հնարավոր է անել բջիջի այդ աշխատանքներէ արմատական վերակառուցման միջոցով:

ԳՐԱՆԱՑՄԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գարնան դուրստնտեսական կամպանիայի առաջ գրված է հետևյալ մարտական հարցերը «1. կիրառել ավելի արագ տեմպ գյուղատնտեսութեան արտադրան-

քը ավելացնելու համար: 2. առավելագուցն չափով ընդարձակել տեխնիկական մշակուելթների, մասնավանդ բամբակի ցանքերը: 3. վճռական բեկում ստեղծել անասնաբուժութեան պրոբլեմը սոցիալիստական հիմունքներով լուծելու խնդրում: 4. Մեծագուցն չափով զարգացնել կերի արտադրութիւնը, վորն անհրաժեշտ պայման է անասնաբուժութեան զարգացման համար: 5. Ամրացնել ու ել ավելի զարգացնել քաղաքամերձ տնտեսութիւնները՝ բանջարաբուժութիւնը ու այգեգործութիւնը» (Հակոմկուսի Կենտկոմի վորոշումից):

Այս խնդիրները չափազանց լուրջ կերպով դերված են մեր տեղական կազմակերպութիւններէ աշխատանքներէ հիմնական կենտրոնում: Մեր առաջ դերված է մասնավորապես բամբակի ցանքադաշտերէ ընդարձակման ու լայնացման հարցերը: Բամբակացան շրջաններէ կոմյերիտական կազմակերպութիւններէ առաջ խնդիր է դրվում, բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնել բամբակի գարնանացանի պլանները կատարելու համար:

Բամբակացան շրջաններում բամբակի համար պիտանի բոլոր հողերը պետք է տրամադրել բամբակի մշակութեանը: Այդ շրջաններում կոմյերիտական բջիջներէ լողունգը պետք է լինի՝ բամբակի պիտանի հողերում վոչ մի թիղ հացահատիկային ցանքս:

Բամբակի պլաններէ կատարումը դա նշանակում է, վճռական հարված դասակարգային թշնամուն: Ահա թե ինչու կուլակը, այդ արյունարբու գազանը, դիմադրում է բամբակի ցանքերէ տարածութիւններէ լայնացմանը, պայքարում է նրա պլաններէ կատարման դեմ: Պատահական չէ, վոր դաշնակցականները

նույնպես արտասահմանում գազագել են բամբակի ցանքսերի տարածությունների լայնացման համար:

Դասակարգային թշնամին լավ գիտի, վոր պայքարելով բամբակի ցանքսերի տարածությունների լայնացման դեմ. նա պայքարում է խորհրդային իշխանության տնտեսական հիմքերի թուլացման համար: Դրա համար է, վոր նրանք ամեն միջոց գործ են դնում աշխարհ թե գաղտնի խափանելու մեր պլանները, կազմակերպելով ագիտացիա բամբակի տարածությունների լայնացման դեմ, յետմնաց գլուղացիներին խաբելով, թե՛ պորեն ցանիք վորպեսզի եզուց սոված չմեռնես, լավ իմացիր, վոր վաղը սով կլինի բայլընկները քեզ հաց չեն տա: Դրա լավագույն պատասխան է՝ անողոք հարված հասցնել դասակարգային թշնամու վտորնձգություններին, համախմբել աշխատավոր յերիտասարդությանը և կոմյերիտական վողջ մասսաներին բամբակացանի կոնտրոլ թևերի կատարման համար:

Այս տարի բամբակացանքսերի անցյալ տարվա 16.000 հեկտարի փոխարեն ցանելու յենք 25.000 հեկտար բամբակ: Դա խոշոր և մարտական ծրագիր է: Այս ծրագրի կիրառման շուրջն է, վոր պետք է կազմակերպել կոմյերիտական մասսաների պայքարը բամբակացան շրջաններում:

Անցյալ տարի մեր պլանները բամբակի ցանքսի տարածությունների լայնացման բնագավառում, վորոշ չափով թերակատարվեց, իսկ բերքահավաքման պլանները կատարեցին 58 տոկոսով առանձին տեղերում լերեան յեկան խոշոր ճեխքվածքներ, պլանների կատարման բնագավառում: Սա բացատրվում է նրանով,

վոր մենք չկարողացանք ժամանակին կուսակցության ղեկավարությամբ դորահավաքի յենթարկել չքավոր ու միջակ մասսաներին, վողջ կոմյերիտական կազմակերպություններին բամբակի մարտական խնդիրները շուրջը:

Առաջիկա զարնանացանի ընթացքում բամբակացան շրջանների կոմյերիտական կազմակերպությունների առաջ դրված է հետևյալ խնդիրները:

1. Կուսակցության ղեկավարությամբ պայքարել բամբակի պլանների կատարման և գերակատարման համար, կազմակերպել և զլխավորել կոլխոզարժման նոր վերելքը, չքավոր ու միջակ տնտեսությունների 50 տոկոսը ընդգրկել կոլխոզներում, լայնացնել ցանքսադաշտերը, մինչև 25.000 հեկտարի, բարձրացնել բերքատվությունը 1 հեկտարից ստանալով 11 ցենտներ բամբակ:

2. 100 տոկոսով կոմյերիտականներին ընդգրկել կոլխոզներում. ԼԿՅԵՄ բլիշների նախաձեռնությամբ կազմակերպել նոր կոլխոզներ կազմակերպող ինիցիատիվ խմբակները: Նոր կոլխոզիկներ ընդգրկելու, վորպես աշխատանքի լավագույն մեթոդ, կազմակերպել խնամախոսների բրիգադներ, այցելել չքավոր ու միջակ անհատական տնտեսությունները տանել լայն բացատրական աշխատանք բացատրելով կոլխոզների առավելություններն անհատական տնտեսություններին:

3. Կոլխոզների նախաձեռնությամբ պետք է հրավիրել գյուղի աշխատավորական տնտեսություններին ընդհանուր ժողովներ, վորտեղ դնել կոլխոզի վարչությունների ղեկուցումները: Չափազանց պարզ,

դուրացուն հասկանելի լեզվով պետք է ցույց ապա
սին նվաճումները, ինչ վոր ունեցել է կոլխոզը իր
աշխատանքների ընթացքում:

4. Բոլոր բջիջներին կից կազմակերպել հետևյալ
հարվածային բրիգադներ՝ ա) մեքենաներ խնամող ու
վերանորոգող: բ) Պարարտացման և բերքատվության
բարձրացման. գ) Օանջատաշտերի լայնացման, դերի
և քարքարոտ հողամասերի մաքրող բրիգադներ: զ)
Ագիտ պրոպ գրուպաներ, վորոնք պետք է կազմակեր-
պեն գարնանացանի ագիտացիայի և պրոպագանդայի
գործը: յե) Հեղիդուների դեմ պայքարող ու ջրաբաշ-
խական աշխատանքներին ոժանդակող բրիգադներ
(առուները մաքրել, նոր առուներ բանալ):

5. ԼԿՑԵՄ բջիջների աշխատանքների արմատա-
կան վերակառուցումներ—լիովին կենսագործել «յերես-
ներս դեպի կոլխոզ» լոզունգը, պայքարել ինքնարժե-
քի իջեցման, աշխատանքի դիսցիպլինայի բարձրաց-
ման, աշխատանքների ռացիոնալ կազմակերպման ու
կոլխոզների ամրացման համար, ոգտագործելով սոց-
մրցումը աշխատանքների բոլոր ասպարեզներում:

ԱՆԱՍԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձ-
նել անասնապահության գտրգացման խնդիրներին:
Գյուղատնտեսության այս ճյուղը Հայաստանում ունի
զարգացման խոշոր հեռանկարներ: 1931 թվին կոլտն-
տեսություններում պետք է լինի համայնացված կո-
վեր 9.000 գլուխ, վոչխար 80,000 գլուխ, խոզ 5.000
գլուխ: Այս տարում կազմակերպվելու յե խոշոր յեղ-
ջուրավոր անասնապահական 27—30 կոլտնտեսու-

թյուններ, վորտեղ համայնացված կովերի թիվը յու-
րաքանչյուրում պետք է լինի վոչ պակաս 300 գլուխ:
Հիմք են դրվելու անասնապահական խորհրդային տնտե-
սություններ:

Այդ նշանակում է, կազմակերպել անասնապահ-
կան այնպիսի կոլխոզներ ու սովխոզներ, վորոնք
կետագա դարգացման միջոցով հնարավոր է լուծել
կաթնամթերքների և մսի պրոբլեմն այնպես. ինչպես
մենք լուծեցինք հացի խնդիրը: Ահա թե ինչո՞ւ ա-
ռաջիկա գարունը բեկման տարի պիտի հանդիսանա,
ունասնաբուժությունը սոցիալիստական հիմքերի վրա
դնելու համար. Այստեղից բխում է, անասնապահա-
կան շրջանների կոմյերիտական կազմակերպություն-
ների անելիքները՝


1-2962-1

1. Ընդգրկել կոմյերիտականներին կոլխոզներում
100 տոկոսով:

2. Կոմյերիտական բջիջների նախաձեռնությամբ
կազմակերպել նոր կոլտնտեսություններ, կազմակերպել
ինիցիատիվ խմբակներ, վորոնց մեջ ընդգրկել նաև
անկուս յերիտասարդությանը: Յուրաքանչյուր կոմյե-
րիտական բջիջ նոր կոլխոզներ կազմակերպող հարվա-
ծային բրիգադ պետք է հանդիսանա գյուղում:

3. Կատարել վճռական ըրձադարձ դեպի կոլխոզ-
ների ներքին տնտեսական կազմակերպչական աշխա-
տանքների ամրացումը, Բարձրացնել կոլխոզների ար-
տադրողականությունը, կազմակերպել հարվածային
բրիգադներ կոլխոզներում և սովխոզներում, գործնա-
կան մասնակցությունը ցույց տալ արտադրական խոր-
հրդակցություններին աշխատանքներին:

4. Կազմակերպել կոլխոզներում որինակելի կոմ-



յերիտական անասնապահներ, վաչխարաբուծների բրդագործներ, հաճախ հրավիրել նրանց խորհրդակցություններ և շրջանային հավաքներ, տալով գործնական առաջադրանքներ անասունների խնամքի և անասնաբուծութեան զարգացման հետագա անելիքների ասպարիզում:

5. Կատարել կոլխոզնիկների և կոմյերիտականների կցումները անհատ չքավոր ու միջակ տնտեսություններին, կազմակերպել կարմիր խնամախոսների բրդագործներ կոլխոզներում նոր չքավոր և միջակ գյուղացիները ընդգրկելու համար: Կոլխոզների զեկուցումները ղենել գյուղի աշխատավորական ընդհանուր ժողովներում, ստեղծելով լայն մասսայական կարծիք կոլխոզների առավելությունների մասին:

6. Հիմնական խնդիր համարել խոտաբույսերի ցանքսադաշտերի տարածությունների լայնացումը յեղած չափերների և խոտատեղերի լավ ոգտագործումը անասունների համար վորակյալ կերի պատրաստումը և այլն: Վորակյալ կերի պատրաստման հիմնական միջոցներից մեկը դա կերի սիլոսացումն է, վորի վրա այս տարի մեր կոմյերիտական բլիջները հատուկ ուշադրություն պիտի դարձնեն. անցյալ տարի կոմյերիտական կազմակերպությունները ձեռնարկեցին սիլոսի հորերի փորման կամպանիան, վորն անհաջողությունների մատնվեց: Այդ կամպանիան վիժեց, վորովհետև աշխատանքներն սկսվեցին չափազանց ուշ, անպլանային, տարերաչնորեն:

Սիլոսի հորերի փորման կամպանիայի վիժեցման հիմնական պատճառներից մեկն էլ պետք է համարել Հոգժողկոմատի տեղական ապարատների, մասնավորա-

պես առանձին մասնագետների վախկոտ, ոպորտունիստական վերաբերմունքը, դեպի կոմյերիտական մասնանների նախաձեռնությունները: Այս տարի վճռականորեն պայքարելով կոմյերիտական և աշխատավորյերիտասարկության ուժերի թերազնահատման տրամադրությունների դեմ, տեղական կազմակերպությունները այժմյանից պետք է զբաղվեն այդ խնդրով. շրջանի գյուղատնտեսների միջոցով պետք է ընտրել հորերի տեղերը, համապատասխան բուսական պաշար ստեղծել սիլոսացման համար և նախատեսել սիլոսի համար հատուկ ցանքսատարածություններ: Հոգժողկոմատի տեղական կազմակերպությունները, կոլխոզ շրջմությունները այժմյանից պետք է մտածեն սիլոսի հորերը շինարարական անհրաժեշտ նյութերով ապահովելու (փայտ, կիր, ցեմենտ և այլն) մասին:

Անասնապահական շրջաններում խոտաբույսերի մշակման հարցը հիմնական խնդիր է: Խոտացանքսատարածությունների լայնացումը կատարվում է ի հաշիվ խոտաբուծության զարգացման, նոր խոտաբույսերի տարածությունների լայնացման: Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել խոտացած (կուպտոն, քուսպ, և այլն) կերի հայթայթման վրա: Ժամանակին հարց հարուցել համապատասխան մարմինների առջ ձեռք բերել այդպիսին:

Բանջարաբուծության խնդիրը. — Վոչ պակաս ուշադրություն պետք է դարձնել բանջարաբուծության և այգեգործության խնդիրներին: Բանջարաբուծության զարգացման հարցը 31 թ. ընթացքում իր ամբողջութամբ զրված է կոմյերիտական կազմակերպությունների առջ. քաղաքամերձ տնտեսությունների բան-

Չարարութեան զարգացման գործում «կոմյերիտմի-
ուսթյունը պետք է գործոն մասնակցութիւն ունենա
և այդ գործը համարի իր սեփական գործը»: Սակայն
հիվ կարող է ժխտել, մասնավորապես կոմյերիտմիու-
թեան աշխատանքի ամենաթուլ ասպարեզը մերձքա-
ղաքային տնտեսութիւնների, բանջարանոցների աշ-
խատանքների կազմակերպման մեջ է: Այս գործում
խոշոր անելիքներ ունեն քաղաքային կոմյերիտական
կազմակերպութիւնները, վերջինք բանջարանոցներին
գործնական ոժանդակութիւն ցուց տալու համար
պետք է կազմակերպեն շարաթորչակներ առուները
մաքելու, նոր առուներ հանելու, քաղհան անելու, հո-
ղամասերը պարարտացնելու և այլ ասպարեզներում:

Շատ կոմյերիտականներ ու կոմյերիտական բը-
ջիջներ բանջարանոցային գործը խաչտառակ կերպով
թեքագնահատում են ու փախչում նրանից՝ «Յես բոս-
տանչի չեմ լինի, բանջարանոցում չեմ աշխատի» ա-
սում են նրանք: Այս տրամադրութիւնների դեմ պետք
է պայքարել: միայն քաղքենիները կարող են այդպես
մտածել, թէ բանջարանոցների գործը մեր գործը չէ,
այդպիսիները սոցիալիստական շինարարութեան ֆը-
րոնտը լքողներ են, աշխատանքից փաղչող դեզերտիր-
ներ, վորոնց միութեան մեջ չպետք է թողնել:

ԼԱՅՆԱՑՆԵԼ ՑԱՆՔՍԵՐԻ ՏԱՂԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջիկա գարնան ցանքսերի տարածութիւնը
կազմում է 338,388 հեկտար 1930 թվի 266,414 հեկ-
տարի դիմաց, գարնանացանի տարածութիւնները ըն-
դարձակվելու չեն 26,8%: Հացահատիկային բույսերը՝
ցորեն, գարի և այլ մշակույթների տարածութիւնները

լայնանալու չեն 76,493 հեկտարով կամ 7,4% -ով: Տեխ-
նիկական բույսերի՝ բամբակ, ծխախոտ, սոյա և այլն
տարածութիւններն ալեկանալու չեն 16,611 հեկտա-
րով կամ 78,6% -ով: Այլ մշակույթներ (կերի արմատա-
պլտուղներ, ցանովի խոտեր, կարտոֆիլ, բանջարանոց-
ներ և այլն ընդարձակվելու չեն 37,333 հեկտարով կամ
185,5% -ով: Միմիայն արմատապտուղների ցանքսերի
տարածութիւնները հասցվելու չեն 2,000 հեկ., սիլո-
սինը—2,300 հեկտարի և այլն: Ինչ խոսք, վոր առաջին
հերթին պիտի վարել ու ցանել այն հողամասերը, վո-
րոնք մինչև այսօր հնարավորութիւն չենք ունեցել ոգտ-
ագործել, մնացել են խոպան և անոգտագործելի, հողերի,
ցելերի, անտառաին ազատ տեղերի, քարքարոտ տեղերի
ոգտագործման միջոցով պետք է լայնացնել ցանքսերի
տարածութիւնը: Մշակելի հողամասերի տարածութիւն-
ները միեւնույն ժամանակ ընդարձակվելու չեն շրատնտե-
սական աշխատանքներով ստացված նոր հողերով:

Սոշոր նշանակութիւն ունի քարքարոտ հողա-
մասերի մաքրելը, վորին առաջին հերթին պետք է
ձեռնարկեն կոմյերիտական բջիջները:

Ինչպե՞ս մաքրել խոպան մնացած fwarfurms տեղերը:
Այս աշխատանքներում կոմյերիտական կազմակերպու-
թիւնները ունեն աշխատանքի փորձ: Մենք ունենք
մի շարք բջիջներ, վորոնք իրենց անմիջական նախա-
ձեռնութեամբ հսկայական աշխատանք են տարել քար-
քարոտ, խոպան մնացած դաշտերը, մաքրելու և ոգտագոր-
ծելի դարձնելու ասպարեզում: Բավական է հիշել այն
խոշոր նվաճումները, վոր անցյալ տարի ունեցան այդ
ասպարեզում՝ Ղամարլի, Մուլագուկչայի և Ղուրդուղու-
լիի ԼԿՅԵՄ կազմակերպութիւնները: Այնուհետև բա-

սարգեչարի Բաջազետի շրջանի Թուզկուլու և Սարուխան գյուղերի ԼԿՅԵՄ բՆԻՆԻՐԻ նվաճումները: Նրանք, գյուղի աշխատավոր յերիտասարդության հետ միասին կազմակերպեցին մի շարք շաբաթորյակներ, սալլերով և փոխադրական ալ միջոցներով արտերը մաքրելու, ցանքատարածութունները լայնացնելու ու պարարտացնելու համար: Անհրաժեշտ և ընդգծել Թուզկուլու գյուղի ԼԿՅԵՄ բՆԻՆԻ մասնակցութունը անցյալ տարվա զարնանացանի և աշնանացանի աշխատանքներին: Ամբողջ բՆԻՆԻ ընդգրկված և կոլլտոգում, նա իրեն հայտարարել և հարվածալին՝ ցանքսերի, տարածութունների լայնացման, բերքատվության բարձրացման, սերմերի զտման ու պարարտացման աշխատանքներում: Կոմյերիտականներն աշխատում էլին 14—16 ժամ որական:

Այս տարի բայլնիկյան յերկրորդ զարնանացանին կոմյերիտական բՆԻՆԻՐԸ պետք և դիմավորեն ավելի կազմակերպված ու նոր ուժերով, ձեռնարկելով ցանքատարածութունների լայնացման աշխատանքները: Այս տեսակետից չափազանց դնահատելի յե Ղուրդուղուլու շրջանի Աղջարի գյուղի ԼԿՅԵՄ բՆԻՆԻ նախաձեռնութունը: Նա կուս. բՆԻՆԻ հետ միասին իրենց գյուղի առաջիկա զարնանացանի պլանի 552 հեկտարը ավելացրել և 75 հեկտարով: Կոմյերիտական բրջիջը այդ 75 հեկտարի մեակումը իր վրա յե վերցրել ի հաճիվ միջեյվ այժմս չոգսալործված հողերի:

Մեր գյուղական ԼԿՅԵՄ բՆԻՆԻՐԸ պետք և որինակ վերցնեն Աղջարի գյուղի ԼԿՅԵՄ բՆԻՆԻՐԸ, այժմվանից ձեռնարկելով այդ աշխատանքները: Ամեն մի բՆԻՆԻՐԸ առաջ հարվածալին կերպով պիտի դնի, ցանքսա-

դաշտերի լայնացման, բիրքատվության բարձրացման, արտերի պարարտացման գործնական խնդիրները:

Այս աշխատանքները ղեկավարելու համար բոլոր բՆԻՆԻՐԸ կից պետք և կազմակերպել նախաձեռնող խմբակներ, ոժանդակող և հարվածալին բրիգադներ: Վորոնք պետք և աշխատեն բՆԻՆԻՐԸ բյուրոների ղեկավարությամբ: Բյուրոն պիտի կատարի աշխատանքի բաժանում բրիգադների միջև, բաժանի քարքարոտ հողամասերը բրիգադներին միջև՝ պահանջելով վերջինի սահմանած ժամանակամիջոցում կատարելու տրված հանձնարարութունը:

Հարվածալին ու նախաձեռնող բրիգադներում պետք և լայն կերպով մասնակից դարձնել գյուղի անկուս յերիտասարդությանը և մեծահասակ ղյուղացիներին: Բրիգադները աշխատանքի դուրս գալու ժամարին: Բրիգադները աշխատանքի դուրս գալու ժամանակ իրենց հետ պետք և ունենան փոխադրական միջոցներ սայլ, Ֆուրգոն, բահ և այլն հնարավորութուններ, վորոնցով հավաքված քարերը պիտի տեղափոխեն արտից հեռու վորոշված տեղը: Ամեն որ յերեկոյան, բրիգադների հարվածալին աշխատանքից հետո պետք և հրավիրել խորհրդակցութուն, հաշվի առնելու իրենց աշխատանքների արդյունքները:

Ցանքսերի տարածութունների լայնացման մյուս միջոցներն են՝ կազմակերպել հասարակական աշխատանքներ շաբաթորյակներ, կարմիր աբոգներ, հասարակական բուքսիքներ, վորոնց նպատակն և լինելու ոգնել, ոժանդակել կոլլտոգներին նրանց արտադրական պլանները կատարելու և գերակատարելու համար: Շաբաթորյակներ պիտի կազմակերպել նաև չքավոր և կարմիր բանակայինների ընտանիքների ցանքերը վարելու համար:

Շաբաթորյակը կոմունիստական աշխատանքի ձև է, վորի կազմակերպման վրա հատուկ ուշադրութիւն պիտի դարձնեն կոմյերիտական ըջիջները: Դեռևս 1919 թ. ընկ. Լենինը իր միհոգվածում նվիրված բանվորական մասսայական շաբաթորյակներին, ասում է. «մի բան, վոր կոմունիստական է համարվում, դա բանվորների հերոսութիւններով կազմակերպված շաբաթորյակներն են»: Կոմունիստական շաբաթորյակները, սոցիալիստական շինարարութիւն մասնակցութիւն ձեռքից լավագույնն է, վորը առաջիկա պարսանացանի ընթացքում պետք է դարձնել աշխատանքի հիմնական մեթոդներից մեկը:

Հաջորդ հիմնական խնդիրներից մեկն էլ այն է, վոր ժամանակին ցանվեն հասարակական ֆոնդի հողերը (ՓՈԿ-ի և դպրոցական հողամասերը): Մինչև այժմ չեղած փորձերը ցույց են տալիս, վոր այդ բնագավառի աշխատանքներն անհամեմատ վատ են կազմակերպված, յերբեմն պատահել են զեպքեր, լերբ դրպրոցական և հասարակական ֆոնդի հողերը հանձնվել են գյուղի ունեւոր և կուլակ տարրերին՝ կիսով ցանելու: Սա կրւա գծի խախտուակ աղավաղում է և աջ ոպորտունիզմ պրակտիկայում, վորի դեմ պետք է կազմակերպել վճռական պայքար:

Դպրոցական հողամասերի մշակման հետ Հայաստանի կոմյերիտական կազմակերպութիւն վրա պարտականութիւն է դրվում 200 հեկ. ավելի մշակելի հողամաս պարտադիր ուսման ֆոնդ ստեղծելու համար: Լոզունգ պիտի ունենալ «Ամեն մի կոմյերիտական ըջիջ մի հեկտար պիտի ցանի պարտադիր ուսման համար»:

100%-ՈՎ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՐՈՍԻՆԻՍՈՒՄԸ. ԿԻՐԱՌԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Ցանքատարածութիւնների հետ միասին մեր առաջ դրված է բերքատվութիւն բարձրացման խոշոր խնդիրը: Բերքի բարձրացումը կախված է ագրոկուլտուր ձեռնարկների կիրառումից: Վերջան ագրոկուլտուրան դառնա լայն մասաների սեփականութիւն, այնքան կբարձրանա ցանքսերի բերքատվութիւնը:

Խորհրդային իշխանութիւնը խոշոր ջանքեր է թափում ագրոկուլտուրայի մասսայականացման ու կիրառման ուղղութիւնում: Խոնչ խոսք, վոր այս ասպարիզում ունենք վորոշ նվաճումներ: Այժմ արդեն մեր Հողօգոկոմատի առաջ խնդիր է դրված յերբեք չբավարարվել ագրոմիլիտումի անցյալ տարիների նվաճումներով: Հերթական խնդիր է վճռականապես լայնացնել ագրոմիլիտումը, բարձրացնել նրա վորակը:

Մեր աշխատանքն այս ուղղութիւնում անհանդուրժելիորեն դանդաղ է առաջ գնում: Գյուղատնտեսութիւն կուլտուրական մշակման ձեռքը դեռևս չեն դառել մեր գյուղի աշխատավոր մասսաների սեփականութիւնը. այն բոլոր խնդիրները, վորոնք մասնավորավորապես այս բնագավառում դրված են կոմյերիտական կազմակերպութիւնների առաջ, չսփազանց քիչ են կիրառված:

Խոնչ է նշանակում ագրոկուլտուրայի կիրառումը: Այդ նշանակում է, գյուղատնտեսութիւնը մտակել նոր ձեվերով, պարարտացնել հողը, դտել և ախտահանել սերմը, չութի փոխարեն ոգտագործել գութանը, տրակտորը: Գյուղատնտեսութիւն մեջ ներմուծել նոր մե-

քենաներ, կալսող, քաղող, սերմագտող, կոմբալն և այլն:

Ագրոկուլտուրայի գործադրումը գյուղատնտեսութեան մեջ, նշանակում է քիչ աշխատելով շատ արդունք ստանալ հողից, այս տեսակետից մենք դեռևս շատ յետ ենք մնացել կապիտալիստական առաջավոր յերկրներին: Այնտեղ գյուղացին իր մի դեպատին հողի տարածութունից ստանում է 150—175 փութ, իսկ մեզ մոտ միջին հաշվով 60—70 փութ հացահատիկ: Նրանք մեզանից ավելի քիչ են աշխատում և շատ ստանում, իսկ մենք մի քանի անգամ ավելի շատ ենք աշխատում քայց 2-3 անգամ պակաս ստանում: Այս փաստերը մեզ ասում են, վոր մենք անհամեմատ յետ ենք մնացել այս ասպարիզում:

Ահա, թե ինչու ագրոկուլտուրայի մասսայականացման ու կիրառման խնդիրները պետք է դառնան կոմիերիտական բժիշկների հիմնական հարցերից մեկը: Նրանք պետք է լինեն նախաձեռնողներ այդ աշխատանքի ասպարիզում: Ինչ խոսք, վոր չափազանց խոշոր ագրիտացիոն նշանակութուն ունի, յերբ կոմիերիտական բժիշկը՝ գլուղում կոլխոզում վերցնում է մի հոգամաս և այն մշակում նոր կուլտուրական ձևերով:

Առաջիկա գարնան գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում նախատեսված հացահատիկային բույսերի բերքավորութունը բարձրացնել 11,1% -ով, իսկ բամբակի մեկ հեկտարից ստանալ 11 ցննտներ բերք: Առանց շարունակելու պալքարը ագրոկուլտուրայի կիրառման համար հնարավոր չէ կատարել բերքի բարձրացման նախատեսված պլանը: Իսկ այդ պալքարի առաջին շարքերում պետք է լինի ԼիՅեՄ բժիշկը: Վորոնք են մեր գործնական և անսխիզական անեկրքները այս ուղղութեամբ:

1) Սերմագում.— Կոմիերիտական կազմակերպութունները վերցրել են սերմագուման շեֆությունը: Սերմերը պետք է զտել 100% -ով, այս աշխատանքների համար կոմիերիտական բժիշկներին կից պետք է կազմել նախաձեռնող խմբակներ, վորոնք իրենց վրա պետք է վերցնեն սերմերի գուման պատասխանատվութունը, լողունգ ունենալով «վոչ մի հատիկ սերմ առանց զտելու հողը չձգել»: Սերմագուման մեքենան վոչ մի րոպե չպետք է կանգնի մեքենաներն աշխատելու չեն ամբողջ որը՝ 24-ժամ, վորի ընթացքում մեքենաների վրա պետք է կազմակերպվի աշխատանքային հերթապահութուն:

Սերմագուման աշխատանքների ժամանակ բժիշկը բաժանվում է մի քանի հարվածային բրիգադների, կատարվում է աշխատանքի բաժանում բրիգադների միջև, մեկին հանձնարարվում է սերմագտումը և ախտահանումը, յերկրորդին հաշվառման գործի կազմակերպումը և այլն: Հատուկ ուշադրութուն պիտի դարձկերպումը և այլն: Նատուկ ուշադրութուն պիտի դարձանիլ աշխատանքների հաշվառման վրա, թե վոր տանից ինչքան սերմ է բերված, վորքան է գտլած, ինչքան բանվորական ուժ է ոգտաբործված այս ուղղութեամբ և այլն: Այս անհրաժեշտ է նրա համար, վորպիսի բժիշկը հետագայում կ'որոգանա մի ընդհանուր հանրագումարի բերել իր աշխատանքները:

2) Ծարբացան.— Ագրոմինիմումի կիրառման հարցերից մեկը շարքացանի կիրառումն է: Ամեն մի կոմիերիտական ու աշխատավոր գյուղացի լավ պետք է իմանա, վոր շարքացանով ցանելը ունի խոշոր նշանակութուն:

Ծարքացանով մի դեպատին հողի վրա պետք է ցանել 8—10 փութ սերմ, իսկ շարքացանով 12—14

փուլի: Շարքացանով ցտնվում է հավասար, մի տեղ նոսր չի լինում, մյուս տեղը խիտ, վորը խոշոր նշանակութիւն ունի բույսի զարգացման համար, իսկ շաղաքանով, ընդհակառակը սերմի մի մասը դուրս է մնում, վորը դառնում է թռչունների կեր, ցտնվում է անհավասար, մի տեղ խիտ մի ուրիշ տեղ նոսր. յերբ շարքացանով է ցտնվում սերմը հողի մեջ գնում է վորոշ խորութիւնք և ազատ մնում մյուս պատահարներից:

3) Գունաղբի յեվ մոխիրի ոգսագործումը. — Բերքի բարձրացման հիմնական միջոցներից մեկն էլ հողի պարարտացումն է: Հողը պարարտացվում է քիմիական և այլ միջոցներով՝ գոմաղբով, մոխրով և առհասարակ աղբով, վորովհետև մենք գեոևս այնքան հարուստ չենք քիմիական միջոցներով վորպէսզի կարողանանք պարարտացնել ամբողջ հողը, (հնգամյակի վերջում խոշոր նվաճումներ կունենանք այդ ասպարիզում), ապա պետք է ոգտագործենք մյուս հնարավորութիւնները՝ գոմաղբը, մոխիրը և գյուղի աղբակուտերը:

4) Հիմնական նշանակութիւն ունի նաև ջրաբաշխական աշխատանքների կազմակերպումը: Բերքի բարձրացման պայմաններից մեկը այն է, վորպէսզի ժամանակին ջրվի բույսը: Կոմյերիտական բշիջներին կից պետք է ունենալ ջրվորների կոմյերիտական բրիգադներ, վորոնք գիշեր ու ցիւրեկ հետևելու լին արտերի ջրվելուն, պահպանում են հերթապահութիւն ջրի վրա, պայքարում հեղեղների դեմ, կազմակերպում են շաբաթորայակներ նոր առուններ քանալու, լեղած առուները մաքրելու համար և այլն:

ՎԵՐՑՆԵԼ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԵՖՈՒԹՅՈՒՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԳՈՐԾԸ

Հաջորդ հիմնական հարցերից մեկն է նախապատրաստվել գարնան վարին, վորի համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր մեքենաները, արտադրական միջոցները, աշխատող ձեռքերը և այլն: Այժմվանից պետք է վճռական միջոցներ ձեռք առնել, վերանորոգելու գյուղատնտեսութեան բոլոր վերանորոգման անհրաժեշտ մեքենաները, հաշվի առնել այդպիսիները, հավաքել և պատրաստ պահել վարի համար:

Կոմյերիտական բշիջները վերցնում են մեքենաների շեֆութիւնը, նրանց մաքրելու չուղելու և լւրնամելու գործը: Ամեն մի կոմյերիտական լավ պետք է իմանա, վոր մեքենան պե՛տք է խնամել յեվ պահել այժի յույսի պես: «Թ. Հ.»-ի խնդիրն է կազմակերպել արշափներ պահեստների, գյուղատնտեսական մեքենաների հավաքատեղերի, կոլտոգ-շրջմիութիւնների վրա, շարժելու անմպից լետ մնացողներին, մեքենաների հավաքման ու պատրաստման գործում:

Մեքենաների վերանորոգման ասպարիզում խոշոր անելիքներ ունի քաղաքից գյուղ մեկնող կոմյերիտական գյուղ-մեքենաներ վերանորոգող բրիգադները: Այս տեսակետից մենք ունենք խոշոր փորձ: Անցյալ տարի գործնական աշխատանքներ տարան Յերևանի, Լենինականի, Ալլահվերդու կոմյերիտական կազմակերպութիւնները: Անցյալ տարի կոմյերիտական բրիգադները մեծ ոժանդակութիւն հասցրին կոլտոյներին, չքավոր ու միջակ անհատ տնտեսութիւններին, մեքենաների վերանորոգման և պատրաստման գործում:

Բրիգադաների գործուղման ժամանակ պետք է նախապատրաստական աշխատանքներ տանել, նախորոք կապվել շրջանների հետ, ստեղծել համապատասխան պլաններ, նրանց համար (գիշերելու տեղ, արհեստանոցներ կազմակերպելու տեղեր և այլն):

Հատուկ պարտականություն է դրվում Վաղարշապատի կոմյերիտական տրակտորային կալոնայի վրա: Այս գարնան գյուլատնտեսական կամպանիայի ընթացքում նա իրեն պիտի հայտարարի հարվածային, կարող անաժամանակին պատրաստվել ցանքին, այժմանից ունենա իր կոնկրետ ծրագիրը, կապի սոցիալիստական մրցման պայմանագրեր մյուս մեքենատրակտորային կայանների հետ:

Մեքենատրակտորային կայանների ԼԿՅԵՄ բջիջները սերտ կապ պիտի ստեղծեն իրենց մոտակա գյուղի ԼԿՅԵՄ բջիջի հետ, ոգնելու և ոժանդակելու նրանց աշխատանքներին, կատարելու աշխատանքի փորձերի փոխանակություն:

Կարևոր նշանակություն ունի կոլտոգներին, չըքավոր ու միջակ անհատ տնտեսություններին մեքենաներով բավարարելու գործը: Այս հարցը կապված է խոշոր դժվարությունների հետ: Գլխավոր դժվարությունը գյուղատնտեսական մեքենաներին մի տեղից մյուս տեղը տեղափոխվելու հետ է կապված: Մասնավորապես այս ասպարիզում մենք չափազանց անշնորհ ենք, շատ դեպքերում. այս դժվարությունները ստեղծվում են բյուրոկրատիզմի, մանր բուրժուական անհոգության, անկազմակերպվածության ու քափքփվածության հետևանքով: Անցյալ տարի գարնան լերկուտանյակ գուլթան ամբողջ 15 ուր ձգված է յեղել Սիվանի լճի ափին Զաղալու գյուղում:

Այն ժամանակ լերը ամեն սրը գարնանացանի համար չափազանց վճռական նշանակություն ուներ, մեքենաները բացողյա ձգված եյին դրսում. անձրևի տակ մնալով նրանք ժանգոտվել էյին արդեն, պարզվեց, վոր դրանում մեղալորը փոխադրող մարմիններն են: Նրանց անհոգ, անտարբեր բյուրոկրատական վերաբերմունքի հետևանքով գուլթանները 20 ուր մնում են բացոթյա, անձրևի տակ: Այս տարի այսպիսի լերևույթների նկատմամբ պետք է լինել չափազանց վճռական, խիստ պատասխանատվության կանչելով այդպիսիներին: Այս գործում խոշոր պարտականություն է դրվում «Թ. Հ.»-ի վրա նրանք պիտի լինեն բյուրոկրատիզմի, թափթփվածություն կոնկրետ յերևույթներ յերևան բերողներ: Պետք է ստեղծել սերտ կապ «Թ. Հ.»-ի շրջանային և կենտրոնական շտաբների միջև, պետք է կազմակերպել լայն հասարակական կոնտրոլ գյուղատնտեսական մեքենաների ոգտագործման վրա: Ցանքը լրիվ ու ժամանակին կատարելու համար, խոշոր նշանակություն ունի կենդանի ուժի հաշվառման ու կազմակերպման խնդիրը: Կոմյերիտական բջիջները պետք է լինեն նախաձեռնողները կոլեկտիվներում և հողգտագործական ընկերություններում, կազմակերպելու ձիւլեգա կալոնաներ, վորոնք խոշոր դեր ունեն կատարելու գտրնանացանի պլանի կատարման գործում: Ահա այն հիմնական հարցերը, վորոնք դրված են գյուղական կոմյերիտական բջիջների վրա, գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման, պատրաստման ասպարիզում: Մնում է գործի անցնել, արդարացնել մեր վերցրած շեֆուրյունը:

ԱՄՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԿԱԶ-
ՍԱԿԵՐՊՈՒՄԸ, ՄՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒ-
ՔՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԱՅԼՆ

Հիմնական խնդիրներից մեկը, վոր դրված է
ԼԿՑԵՄ ԸՂԻՂՆԵՐԻ առաջ դարնանացանի ընթացքում
մասսայական աշխատանքների կազմակերպումն է: Հաս-
կանալի յե, վոր այնպիսի խոշոր տնտեսական ու քա-
ղաքական նշանակութուն ունեցող կամպանիան, ինչ-
պիսին դարնան գյուղատնտեսակն կամպանիան է,
չի կարելի լավ կազմակերպել ու հաջող անցկացնել
առանց մասսայական աշխատանքների: Պետք է կազ-
մակերպել և զորահավաքել լենթարկել վողջ կոմյերի-
տական ժասսաներին, անկուս. լերիտասարդության
լայն խավերին, չքավոր ու միջակ գյուղացիական հոծ
մասսաներին, դարնանգյուղատնտեսական կամպանիա լի
կոնկրետ հարցերի շուրջը: Գյուղի կուլտուրական բու-
լոր ձեռնարկությունները, խրճիթ-ընթերցարան, կար-
միր անկյուն և դպրոցն պետք է մասսայական աշխա-
տանք ծավալեն դարնանացանի ուղղությամբ:

Խրճիթներում գյուղական հավաքատեղերում պետք
է կազմակերպեն զրույցներ, բարձրաձայն ընթերցա-
նություններ, դարնանացանի խնդիրների շուրջը, կուր-
խող շարժման հարցերի առթիվ:

ԼԿՑԵՄ ԸՂԻՂՆԵՐԻ ազիտ հարվածային գրուպանե-
րի հիմնական անելիքներից մեկն է կազմակերպել
խմբակային և անհատական ազիտացիան, հաշվի առ-
նել տրամադրությունները, բայցեփիկյան պրոպագան-
դայի յեվ ազիտացիայի միջոցով գորանավափ յեմբարել
աշխատավոր յեթիտասարդության մասսաներին ընդդեմ

դասակարգային թշնամու, ընդդեմ կուլակ-դաշնակցա-
կան տարրերի:

Գյուղի պատի լրագրի հիմնական աշխատանքը
պիտի լինի դարնանացանի առաջ ծառայած խնդիր-
ների պարզաբանումը: Պայքարելով այդ ժասպարիզում
յերևան յեկած թափթիածության, բյուրուկրատիզմի,
անպատասխանատվության դեմ: Պատի լրագրի բը վըճ-
ուականորեն պիտի մերկացնի ու հարվածի այն բոլոր
աջ ոպորտյունիստական տրամադրությունները, կոնկ-
րետ արտահայտությունները, վորոնք յերևան են դա-
լիս պրակտիկ աշխատանքների ընթացքում:

Մասսայական աշխատանքների հիմնական ողակ-
ներից մեկը բասրակա-չխավորական խմբակների մեջ
սարվելիք աշխատանքներն են: Աջբըր զանց են առնում
չքավորության մեջ տարվելիք աշխատանքը: Թերա-
գնահատել այդ աշխատանքները նշանակում է ոգնել
դասակարգային թշնամուն:

Կոմյերիտական կազմակերպությունները կուսակ-
ցության ղեկավարությամբ պետք է ճայնպես կազմա-
կերպեն ու ոժանդակեն չքավորական խմբակների աշ-
խատանքներին, վորպեսզի նրանք վոչ միայն չքա-
վորների անմիջական շահերը պաշտպանեն, այլ և ա-
ջակցեն բանվոր դասակարգի չքավոր գյուղացիության
և միջակի դաշինքի ուժեղացման» (Յակովլևի):

Միանգամայն պարզ է, վոր առանց բատրակա-չքա-
վորական խմբակների աշխատանքների ուժեղացման,
առանց բանվոր դասակարգի, չխավոր գյուղացիության
սեր դաշինքի միջակ գյուղացիության հետ, հետապոր
չե կազմակերպել վնուական պայքար կուլակի դեմ. ա-
ռանց այս հանգամանքի մենք չենք կարող լուծել այն

խոշորագույն խնդիրները, վոր դրված է գլուզի սոցիալիստական վերակառուցման առաջ: Ահա թե ինչու գարնան գլուզատնտեսական կամպանիայի ընթացքում հիմնական հարցերից մեկն է կազմակերպել բատրակա-չքավորական խմբակների աշխատանքները. ուժեղացնել յեղածներն, աշխուժացնել, թարմացնել նրանց աշխատանքների բովանդակութունը, հրավիրել խորհրդակցութուններ, կոնֆերանսներ, հավաքներ, վորտեղ քննության առնել գարնան գլուզատնտեսական կամպանիայի հիմնական հարցերը:

Կանանց և լեռնատասարդ աղջիկները դերը գլուզատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում շատ խոշոր է: Առաջիկա գլուզատնտեսական կամպանիայի ընթացքում, առանձնապես կարևոր է նրանց գործնական մասնակցութունը: Անցած գարնան գլուզատնտեսական կամպանիայի փորձը ցույց տվեց, վոր առանց յերևտասարդ աղջիկների և չքավոր միջակ գեղջիկներին կազմակերպման, առանց նրանց համախմբելու կուսակցության հիմնական գծի շուրջը, դժվար է կազմակերպել ու գլխավորել նոր կոլտոգ շարժման վերելքը:

Մեր աշխատանքները ամենից շատ կաղում են այս ասպարիզում և պատահական չե, վոր դասակարգային թշնամին այս ֆրոնտում լերբենն հաջողութուններ և ձեռք բերում: Դրանով պիտի բացատրել վորոշ չափով և այն խնդիրը, վոր անցյալ տարի կոլտոգ շարժման վերելքի ժամանակ դասակարգային թշնամին, կուսակը, տերտերն ու դաշնակցականը առաջին հերթին ոգտագործում էյին յետամնաց կանանց ու աղջիկներին, կոլտոգների կազմակերպման դեմ, կոլտոգների քայքայման համար:

Բալլևերկյան 2-րդ գարնանացանին, մեր կազմակերպութունները, յերևտասարդ աղջիկների ու կանանց մեջ տարվելիք աշխատանքների բնագավառում պիտի կատարեն վճռական շրջագարձ, վորն է ԼԿՑԵՄ բլիշների անելիքները այս ասպարիզում:

1. ԼԿՑԵՄ կազմակերպութունները շրջաններում ու գլուզերում պետք է հրավիրեն յերևտասարդ աղջիկների խորհրդակցութուններ և ժողովներ, վորտեղ քըննության առնեն գարնան գլուզատնտեսական կապանիայի խնդիրները:

2. Կոմլերիտական բլիշների ղեկավարությամբ կազմակերպել լեռնատասարդ աղջիկներին հարվածային բրիգադներ, վորոնք պետք է կարկատեն սերմի մեշոկները, ոգնեն, ոժանդակեն կոլտոգների ընդհանուր ճաշի կազմակերպման:

3. Կազմակերպին լայն բացատրական աշխատանք, աշխատավոր կանանց շրջաններում, կազմակերպեն բարձրաձայն ընթերցանութուններ, գրույցներ, ապիտ դասեր, գարնան գլուզ կամպանիայի առթիվ:

4. Կանանց ու աղջիկներին լայն կերպով մասնակց դարձնել դաշտային մյուս աշխատանքներին, առաջ քաշիլ նրանց վորպես բրիգադների ղեկավարներ:

ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ
ԿՐՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԲՁԻՁՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Գլուզի մասսայական աշխատանքների հիմնական ողակներից մեկն էլ արտադրական խորհրդակցութուններն են:

Արտադրական խորհրդակցութիւնները գյուղում համեմատաբար նոր են և չունեն աշխատանքի անհրաժեշտ փորձ: Նրանք քննում են այն բոլոր արտադրական խնդիրները, վորոնք դրված են կոլխոզի կամ գյուղի առաջ, արտադրութեան բարձրացման բնագավառում: Գյուղական արտադրական խորհրդակցութիւնները քննում են հետևյալ հարցերը.

ա) Գյուղատնտեսական ինչպիսի մշակութիւններ (գարի, ցորեն, բամբակ, այգեգործործութիւն և այլն) պետք է զարգացնել իրենց գյուղում. գյուղատնտեսութեան վոր ճյուղի զարգացման հեռանկարներ ունի իրենց գյուղը:

բ) Այնուհետև արտադրական խորհրդակցութիւնները քննում են, արտադրանքի, ինքնարժեքի իշեցման, բերքատվութեան բարձրացման, աշխատանքի ռացիոնալ կազմակերպման, աշխատանքի դիսցիպլինայի բարձրացման, մեքենաների ոգտագործման, աշխատանքի բաժանման և այլ խնդիրներ. անհրով կոնկրետ առաջադրանքներ այդ ուղղութեամբ:

գ) Գյուղ-արտադրական խորհրդակցութիւնները քննում են զարնանացանի պլանը, վորից յիշնելով նրանք անում են պրակտիկ առաջադրումներ պլանը կատարելու և գերակատարելու համար.

Ինչպես տեսնում եք, զարնանացանի աշխատանքների կազմակերպման համար, չափազանց խոշոր նշանակութիւն ունի արտադրական խորհրդակցութիւնները, բայց պետք է ընդգծել, վոր մենք այդ ասպարիզում չափազանց քիչ աշխատանք ենք տարել, չնայած այն հանգամանքին, վոր գյուղական ԼԿՅՄ ԲՆԻՅՆԵՐԻ ճեքրական հարցերից մեկը արտադրական խորհրդակ-

ցութիւնների կազմակերպումն է, նրանց աշխատանքների աշխուժացում ու թարմացումը:

Որինակելի կոմյերիտականն այն է, ով աւտիվ կերպով մասնակցում է արտադրական խորհրդակցութիւնների աշխատանքներին, ով գործնականում պայտառում է արտադրարկան մեք գոյութիւն ունեցող բաւիթըփվածութիւն, սիմուլիացիայի, աշխատանքի դեղերտիրվածութիւն, ով պայքարում է բերքատվութեան բարձրացման, ցանքսադաշտերի լայնացման, աշխատանքների ռացիոնալ կազմակերպման, աշխատանքի դիսցիպլինայի բարձրացման համար: Արտադրական խորհրդակցութիւնների աշխատանքների հետ միասին կատարելու նշանակութիւն ունի ագրոլիադորների աշխատանքները: Ագրոլիադորները տարածում են գյուղատնտեսական նոր գիտելիքներ, հետևում են ագրոմիտիւմի կիրառմանը, գործնական մասնակցութիւն են ցուց տալիս այն հիմնական հարցերի լուծման, վորոնք դրվում են գյուղատնտեսութեան նոր ձևերով զարգացնելու ասպարիզում. ամեն մի կոմյերիտական, ակտիվ ագրոլիադոր պիտի լինի: Կոմյերիտական ԲՆԻՅՆԵՐԸ պիտի տան իրենց շարքերից լավագույն ագրոլիադորներ: Ամեն մի կոմյերիտական լավ պետք է իմանա, վոր կոլխոզների արտադրական խորհրդակցութիւնները, գյուղական ագրոլիադորներն ու խորհրդակցութիւնները խոշոր նշանակութիւն ունեն գյուղատնտեսութեան կուտուրական ձևերով մշակելու գործում:

**ԱՌՑ. ՄՐՅՈՒՄՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԱՐՆԱՆԱՅԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

ԸՅԿ. ԼԵՅԻԳԸ ասում է, վոր կոմյերիտութիւններ պիտի կազմակերպի սոցիալիստական մրցում իրեն աշ-

խատանքները բոլոր աստղաբեզներում. կոմյերիտմիությունը մի հարվածային բրիգադայի, վորին պիտի ուզուի աշխատանքի ամենադժվար Ֆրոնտ: Մեր մեծ ուսուցչի պատգամն այսօր կիրառվում է Բոլորում և յերկրորդ տարին, ինչ կոմյերիտմիության նախաձեռնութեամբ բարձրացվել է սոցիալիստական մրցման անկիւքը. նա ընդարձակվեց ծավալվեց, հանքերում, գործարաններում ու ցեխերում. քաղաքներում ու գյուղերում. սովխոզներում ու կոլխոզներում. 3 միլիոնանոց կոմյերիտական բանակի 62 տոկոսը ընդգրկված է սոց.-մրցման ու հարվածայնութեան մեջ: Այս խոշոր աշխատանքը կոմյերիտական կազմակերպութեան ընթացիկ շրջանի ամենազլխավոր նվաճումներից մեկն է: Սա ցույց է տալիս, վոր կոմյերիտմիությունը հիմնականում կատարել է շրջադարձ դեպի տնտեսական խնդիրները, դեպի սոցիալիզմի կառուցման պրակտիկ հարցերը միայն մտնում է ավելի ընդարձակել, ծավալել ու ամրացնել այս շրջադարձը, մրցութունն,—ասում է ընկ. Սալիքը, «իրօք սոցիալիզմի շինարարութեան կոմունիստական մեթոդ է» իսկապես մրցութունը այն լծակն է, վորի ոգնութեամբ բանվոր դասակարգը «կոչված է յերկրի ամբողջ տնտեսական ու կուլտուրական կյանքը շուտ տալու սոցիալիզմի բազայի վրա»:

Բանվոր ու աշխատավոր յերիտասարդությունը կոմունիստական կուսակցութեան դեկտվարութեամբ ոգտազործելով սոց.-մրցումն ու հարվածայնությունը, պայքարում է սոցիալիզմի վերջնական կառուցման համար:

Մեզ մոտ Հայաստանում ևս ունենք խոշոր նվաճումներ սոց.-մրցման ու հարվածայնութեան կազմա-

կերպման ասպարիզում: Հերոսական աշխատանքներ են թափում սոց.-մրցման ու հարվածայնութեան նշանաբանի տակ, կոմյերիտական բրիգադներ (Յեքեան՝ կարբիտի, մեխ. գործարան, Արարատ գործ. պոլիգրաֆ. տրեստ., Լենինականում՝ տեկստիլ, դեպո, մեխ. գործարան. Ալլահվերդի, Ղափան և այլն): 5-ամյակը 4 տարում կատարելու համար: Մեր գյուղական առաջավոր կազմակերպութուններ (Ղուբուղուղուլի, Ղամարլու, Վաղարշապատ և այլն) նույնպես այս ասպարիզում ունեն նվաճումներ, սոց.-մրցումն ընդգրկել է մեր աշխատանքների բոլոր ասպարեզները: Սակայն պետք է ընդգծել, վոր, մասնավորապես սոց.-մրցման աշխատանքները գյուղում թույլ է ծավալված:

Անցյալ տարի մեր կոմյերիտական մի շարք կազմակերպություններ գարնանացանի աշխատանքներին գործնական մասնակցութուն ցույց տալու համար կապեցին սոց.-մրցման պայմանագիր՝ որինակ Մուլադոկչաչի կոմյերիտական կազմակերպութունը կապել է սոցմրցման պայմանագիր Ղուբուղուղուլի կոմյերիտական կազմակերպութեան հետ: Սակայն հետագայում այդ պայմանագրերն իրենց անհրաժեշտ հետևանքները չունեցան, կարծես չարժանացան անհրաժեշտ ուշադրութեան. թուլացավ դեկտվարությունը և աշխատանքները մատնվեցին անուշադրութեան: Իսկ շատ դեպքերումն էլ ուղղակի աղավաղում են սոց.-մրցման պայմանագրը, նրան դարձնում ասպարատային, բյուրոկրատական գործ, այնպող անելով մասսաների նախաձեռնություներ ու ինքնագործնելությունը: Յեղան և այնպիսի կոմյերիտական բջիջներ, վորոնք պայմանագիր կապեցին իրար հետ, բայց աշխատանքի ընթացքում մատը մատին չիփեցեն:

Այս ասպարիզում հիմնական թերությունները հետևյալներն են.

ա) Թույլ բացատրական աշխատանք և տարվում սոց.-մրցման ու հարվածայնության գաղափարը մասսայականացնելու համար:

բ) Շատ դեպքերում սոց.-մրցման պայմանագրերը կապվում են ձեռնարկներին, առանց կոմյերիտական ու անկուս յերիտասարդության լայն մասսաների մասնակցության:

գ) Թույլ և զեկավարվում սոց.-մրցման ու հարվածայնության աշխատանքները ԼԿՅԵՄ բջիջների կողմից:

դ) Չկա սոց.-մրցման աշխատանքների փորձերի փոխանակություն:

ե) Չի կազմակերպվում պարզևատրում լավագուցն հարվածայիններին:

զ) Չի ոգտագործվում կարմիր ու սև տախտակը այդ ասպարիզում.

է) Թույլ և կազմակերպվում ագիտացիան ու պրոպագանդան սոցմրցման աշխատանքների շուրջը (պատի լրագիր խրճիթ ընթերցարաններ, զրույցները, ընթերցումներ և այլն):

Առաջիկա դարնանացանի ընթացքում լուրջ ուշադրություն պիտի դարձնեն սոց.-մրցման ու հարվածայնության աշխատանքների կազմակերպման վրա, այն դարձնելով լայն մասսաների սեփականութունը. այդ աշխատանքները ծավալելու համար, գարնանացանի կոնկրետ հարցերը հարվածայնությամբ լուծելու համար, անհրաժեշտ և հետևյալը.

ա) Բջիջային ժողովների, խրճիթ ընթերցարան-

ների, կարմիր անկյունների, զրույցների ու բարձրաձայն ընթերցանությունների միջոցով մասսայականացնել սոցմրցման ու հարվածայնության գաղափարը:

բ) Սոց.-մրցությունն ու հարվածայնությունը դարձնել լայն մասսաների գործ. պայմանագրերը քըննել միացյալ ժողովներում, անկուս. լերիտասարդության հետ միասին հրավիրել ընդհանուր ժողովներ, քննության առնել սոց.-մրցման յենթակա հարցեր:

գ) Ուժեղացնել սոց.-մրցման ու հարվածայնության զեկավարությունը կոմյերիտական բջիջների կողմից, բյուրոների և բջիջների միացյալ նիստերում հաճախ լսել զեկուցումներ, սոց.-մրցման աշխատանքի զրության ու ընթացքի մասին:

դ) Սերտ կապ ստեղծել արտագրական առաջավոր սովխոզների ու կոլխոզների բջիջների հետ, կազմակերպել եքսկուրսիաներ:

է) Սոց.-մրցման աշխատանքների ասպարիզում ոգտագործել կարմիր ու սև տախտակներ. հրավիրել հարվածայինների, գյուղական հասարակական կազմակերպությունների հանդիսավոր նիստեր, լայն ժողովներում լավագուցն հարվածայիններին պարզևատրելու համար:

Սոց.-մրցումն ու հարվածայնությունը պետք և դարձնել գարնանացանի պլանների կատարման և գերակատարման հիմնական միջոցը. կոմյերիտական բրիգադները պետք և լինեն որինակելի իրենց աշխատանքների ասպարիզում. պետք և կազմակերպել կոմյերիտական հարվածային բրիգադներ: Կոմյերիտական բջիջների սոց.-մրցման պայմանագրերում չափազանց պարզ կերպով պետք և նշել, թե ինչ խնդիրներ են

վերցնում իրենց վրա պայմանավորվող կողմերը: Վերցնենք որինակ՝ Վաղարշապատի կոմյերիտական կազմակերպությունը սոց.-մրցման պայմանագիր է կնքում Դուզբլանդի ԼԿՅԵՄ կազմակերպության հետ, պայմանագրում յերկու կողմերն էլ պետք է չափազանց պարզ կերպով նշեն իրենց անելիքները կոլխոզ շարժման վերելքի կազմակերպման, ցանքսադաշտերի լայնացման ու ընդհարձակման, կոմյերիտականներին 100 տոկոսով կոլխոզներում ընդգրկելու, արտերի պարարտացման, մեքենաների ոգտադործման և այլն աշխատանքների ասպարիզում: Պայմանագրերը պետք է քննություն անվեն շրջանային, լենթաշրջանային կազմակերպությունների, կոմյերիտական բջիջների լայնացրած նրատերում: Վերցնենք մի ուրիշ որինակ՝ Ղուբդուղուլի կոմյերիտական կազմակերպությունը սոց.-մրցման պայմանագիր է կապում Տեքստիլի կոմյերիտական կազմակերպության հետ, յերկու կողմերն էլ ընդգծում են իրենց կոնկրետ անելիքները առաջիկա գարնանացանի ընթացքում բամբակի տարածությունների լայնացման, բերքատվության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, կոլխոզ շարժման նոր վերելքի կազմակերպման, բերքի հավաքման և այլ աշխատանքների ասպարիզում: Պայմանագրում նշվում է նաև, թե Ղուբդուղուլի կոմյերիտական կազմակերպությունը ինչքան բամբակ է պարտավորվում տալ Տեքստիլի կազմակերպության: Յնվ ընդհակառակը՝ Տեքստիլի կոմյերիտական կազմակերպությունն իր հերթին, սոց.-մրցման պայմանագրում նշում է իր գործնական մասնակցությունը գարնանացանի աշխատանքներին, ախուհեռու ընդգծում է, արտագրության ասպարիզում իրենց առաջ դրված գործ-

նական խնդիրները, ինքնարժեքի իջեցման, աղբանքի վորակի բարձրացման, բրակի տակոսը կրճատելու և այլ հարցեր:

Սոց.-մրցման պայմանագրեր են կապում իրար հետ գյուղական ԼԿՅԵՄ բջիջները, քաղաքային ու գյուղական բջիջները, սովխոզներն ու կոլխոզները, անհատ կոմյերիտականները, Չափազանց լուրջ կերպով պետք է հետևել պայմանագրերի կիրառմանը. գյուղի շրջանային ու քաղաքային կազմակերպությունների բջիջները միքանի անգամ պետք է ստուգեն պայմանագրերի կիրառման ընթացքը, բջիջներում բյուրոներում լսել գեկուցումներ, այդ առթիվ հրավիրել խորհրդակցություններ, քննել սոց.-մրցման պայմանագրերի աշխատանքների գրությունը, ուղարկել փոխադարձ ներկայացուցիչներ պայմանագրերը ստուգելու համար և հաճախ կազմակերպել ստուգատես սոց.-մրցման պայմանագրերի ընթացքը պարզելու:

Այս մեթոդով միայն հնարավոր է կազմակերպել, ավելի ծավալել ու խորացնել սոց.-մրցման ու հարվածայնություն գործը, գյուղական աշխատանքներում: Այդ դարձնելով աշխատավոր լերիտասարդությունը սոցիալիզմի կառուցման պայքարի միջոց:

ՔԱՂԱՔԻ ՈՐՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻՆ

Գարնանացանի ընթացքում խոշոր դեր ունեն կատարելու քաղաքային կոմյերիտական կազմակերպությունները: Քաղաքի ԼԿՅԵՄ բջիջները պետք է ոգնեն, ոժանդակեն գյուղական կոմյերիտական կազմակերպություններին, ել ավելի ուժեղացնելով արտխտարական գեկավարությունը: Ամենից առաջ քա-

դաքային բջիջները տեղերում բտանվոր յերիասար-
դուծթյան լայն շրջաններում պետք է կազմակերպեն
լայն բացատրական աշխատանք գարնան գյուղատնտե-
սական կամպանիայի տուժիվ: Ամեն մի յերիտասարդ
քանվոր ու կոմյերիտակն պետք է պարզ պատկե-
րացնի առաջիկա գարնան գյուղատնտեսական կամ-
պանիայի, բալլյեիկյան 2-րդ գարնանացանի վճռա-
կան նշանակուծթյունը գյուղի սոցիալիստական վերա-
կառուցման բնագավառում:

Քաղաքային կոմյերիտական կազմակերպուծթյուն-
ների յերկրորդ անելիքն է կազմակերպել գործնական
ոժանդակուծթյուն գյուղական կոմյերիտական կազմա-
կերպուծթյուններին: Այս տեսակետից մեր բոլոր կազ-
մակերպուծթյուններն ունեն խոշոր փորձ: Անցյալ տա-
րի տեղական կազմակերպուծթյունների նախաձեռնու-
ծթյամբ ու ջանքերով մենք կազմակերպեցինք 10 տրակ-
տորից բաղկացած տրակտորային կալոնիա, սրա հետ
մեր քաղաքային մի շարք կազմակերպուծթյուններ (Լե-
նինական, Յերեան, Ղարաքիլիսա և այլն) ցույց տը-
վեցին խոշոր ոժանդակուծթյուն գյուղին տալով գյու-
ղատնտեսական մեքենաներ (գուծան, կալսիչներ և
այլն): Առաջիկա գարնանացանի ընթացքում քաղա-
քային կոմյերիտական կազմակերպուծթյուններն ավելի
կազմակերպված պիտի դիմավորեն գարնանացանին:

Այս գործի հաջող կազմակերպումը խոշոր չափով
կախված է տեղական կոմյերիտական կազմակերպու-
ծթյունների ինիցիատիվայից ԼԿՅՆՄ բջիջներն իրենց
լավագույն ուժերը մոբիլիզացիայի պիտի լենթարկեն
գարնանացանի ֆոնդի խնդիրների կատարման, համար:
Անհրաժեշտ է նորից բարձրացնել կոմյերիտական բրի-

գաղնների անելիքը դեպի գյուղը. հատուկ ուշադրու-
ծթյուն դարձնել նրանց աշխատանքների վրա:

Պետք է ընդգծել, վոր կուսակցական, կոմյերիտա-
կան կազմակերպուծթյունների առանձին ողակնե-
ներում նկատվում է յերբեմն գյուղ մեկնող բանվորա-
կան բրիգադաների թերազնահատելու տրամադրու-
ծթյուններ: Անցյալ տարի յեղան և տենդենցներ, վո-
րոնք ուղեցան կոլխոզարժման ասպարիդում կատրված
«ձախ» ըստ ելուծթյան տրոցկիստական սխալներն ու
քյալլագյոզուծթյունները բարդելու բանվորական բրի-
գադաների վրա: Այդպիսի տրամադրուծթյուններին
պետք է տալ վճռական հարված, դեմ դուրս գալ գյուղ
մեկնող բան. բրիգադներին, նշանակում է թերազնա-
հատել պրոլետարական ղեկավարուծթյունը, որեկտի-
վորեն ոժանդակել կուլակին:

Սակայն այս աշխատանքների կազմակերպման
ժամանակ, պետք է խուսափել անցյալ տարվա սխա-
լներից:

Անցյալ տարի ալդ աշխատանքները տարվեցին
անկազմակերպ անպլանային, տարերայնորեն, վորը
յերբեք չպետք է կրկնվի առաջիկա գարնանացանի
ընթացքում: Յերբեմն ել գյուղ ուղարկեցին այնպիսի-
ներին, վորոնք գյուղի յերես չեյին քեսել, ծանոթ չեյին
նրան, թե ինչպես պետք է աշխատել ու խոսել գյուղա-
ցու հետ: Այս տարի առանց համապատասխան կազ-
մակերպուծթյունների ու քաղկոմների տեղեկուծթյանը,
բրիգադները գյուղ չպետք է գնան:

Գյուղ բրիգադները բաղկացած պիտք է լինեն
այնպիսի ընկերներից, ինչպես ասում է ընկ. Լենինը,—
վորոնք կարողանան սովորել գյուղացուց և ղեկավարել

գյուղացուն: Գյուղ մեկնող բրիգադներում պետք է լինեն մասնագետ ուժեր (գյուղատնտեսներ, հաշվապահներ, բժիշկներ և այլն), վորոնք անմիջապես պիտի ոգնեն գյուղի և կոլխոզների աշխատանքներին, ամբողջն են նրանց հաշվապահական գործը, տանն իրենց հետ գարնանացանի կոլխոզ շարժման վերաբերվող գրականութունը, պլակատներ, լողուններ, և այլն: Նրանք պետք է գյուղական ԼԿՅՆՄ բջիջների հետ միասին կազմակերպեն ներկայացումներ, զրույցներ, միացյալ լերեկոներ — գրանցում, յերաժշտական բաժիններով:

Գյուղ մեկնող կոմյերիտական բրիգադները ԼԿՅՆՄ բջիջների դռնբաց ժողովներում տալիս են զեկուցումներ իրենց կատարած աշխատանքների մասին, և ընդհակառակը պահանջում են իրենց շեֆարկյալ գյուղի ԼԿՅՆՄ բջիջներից. զեկուցելու իրենց աշխատանքների մասին: Այսուհետև պետք է հրավիրել կոլխոզների ԼԿՅՆՄ և քաղաքի արտադրական ԼԿՅՆՄ բջիջների միացյալ ժողովներ, վորտեղ դնել յերկու կողմերի զեկուցումները, իրենց տարած աշխատանքների մասին:

Արտադրական բջիջների հիմնական խնդիրը պետի լինի ոգնել սժանդակել շեֆարկյալ գյուղի ԼԿՅՆՄ բջիջներին, և ավելի բարձրացնել նրանց հեղինակութունը, կատարելու արմատական բեկում նրանց աշխատանքներում. գյուղատնտեսության սոցիալիստական վերապառուցման գործը, կոլխոզ օարժման հերթական նարցեր դարձնելով գյուղական ԼԿՅՆՄ բջիջների հիմնական ու առանցնակալի նարցեր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0957146

ԳԻՆԵԸ 8 409. (1 1/2 մ.)

~~156~~

I
2968

160-1931p.



Կ. Տեդրակյան

Второй большевитский весенний сев
и задача комсомола

Госиздат ССР Армении
Э р и в а н ь